



53. ՄԱՂԴԵՍԻ ԱՂՎԵՍ

Կեղի, չեղի, աղվես մի կեղի:

Աղվես ետ մեկ օր շատ կանոթնա, կէլի, կերթա քաղաք, կասա. «Բնալքի պն մի գտիմ, ուտեմ»: Կերթա, մըտի ներկըտուն, օր պնն կը ներկեն: Կը տեսի, օր մատ մի խաց կա էտտեղ: Կէլի, օր թա խացն առի, ուտա: Պերան օր թա կը թնալա խաց, կը պըռծի, ընգի ներկի կարսի մեջ: Կաժ մի թել կընգի վիզ:

Աղվես էնտեղ կը կանչնա ու կէլի դուս:

Գել կը տեսի, օր աղվեսն էնդեխեն էկավ, կանանչ ա ու պն մի կա վիզ:

Կասա. - Աղվես ախպեր, դո՞ր կերթաս:

Կասա. - Դու քո՞ն ես, ես աղվես՞ս եմ, դու չըտեսի՞ս, օր ես հնջի եմ, կերթամ հնջ:

Կասա. - Մեղա՛ Աստղծու, հնջի՛ ախպեր, ես չըգիտի, օր տու հնջի յիր:

Կասա. - Ընծի էլ չըս տանի՞ խըտ քեզի հնջ:

Կասա. - Օր մեխք չունիս, արի՛ տանիմ:

Կասա. - Ես ի՞նչ մեխք ունիմ: Անասու՛մ եմ՝ խըտ իմ հնալին: Էտոնք խըտ իրարի կերթան ճամբախ, գել կը տեսի, օր լապըստրակ մ՛ էնդեխեն էկավ:

Կասա. - Աղվես ախպեր, դո՞ր կերթաս:

Գել կը տաննա վերեն, լապըստըրկուն կասա. - Տո շան՞ օրտի, չըտեսի՞ս, օր էսի հնջի յա:

Կասա. - Մեղա՛ Աստղծու, ես ի՞նչ գիտի: Դու դո՞ր կերթաք:

Գել կասա. - Մենք կերթանք հաճ, կեղինք հաճի:

Լապըստրակ գելուն կասա. - Կը խընթրենմ, ասա՛, տե՛ս ընծի էլ չըտանի՞ ուր խետ:

Գել կը տանոնա վըր աղվըսուն, կասա. - Գաճի՛ ախպեր, լապըստրակ կասա, ընծի էլ չըտանի՞ ուր խետ հաճ:

Կասա. - Օր թե մեխք չունի, թ՛ իգա՛ տանիմ:

Լապըստրակ կասա. - Ես անասու՛մ եմ՝ խըտ իմ հալին, ի՞նչ մեխք ունիմ:

Աղվես կասա. - Արի՛ էրթանք:

Կերթան քիչ մի ճամբախ, տեսին, օր դիկ մի էնդեխեն էկավ:

Դիկ կասա. - Աղվես՛ ախպեր, դո՞ր կերթաս:

Լապըստրակ կը տանոնա վերեն, կասա. - Քո ձեն կըտրա՛, էսի հաճի յա, կերթա հաճ:

Դիկ կասա. - Մեղա՛ Աստըճու: Ես չըգիտի: Ասա՛, տե՛ս, ընծի էլ չըտանի՞ խըտ ուրիմ:

Լապըստրակ կը տանոնա վըր աղվըսուն, կասա. - Գաճի՛ ախպեր, դիկ կասա՛ ընծի էլ չըտանի՞ խըտ ուրիմ:

Կասա. - Օր մեխք չունի, թ՛ իգա, կը տանիմ:

Դիկ կասա. - Ես ի՞նչ մեխք ունիմ, անասու՛մ եմ՝ խըտ իմ հալին:

Էնդեխեն կընգին ճամբախ, կերթան, կը տեսին, օր անծեղն էնդեխեն էկավ:

Կասա. - Աղվես՛ ախպեր, դո՞ր կերթաս:

Դիկ կը տանոնա վերեն, կասա. - Քովա՛նկ, քո ձեն կըտրա՛, էսի հաճի յա, կերթա հաճ:

Անծեղ դըկուն կասա. - Կը խընթրենմ՝ հաճուն ասա՛, տե՛ս, ընծի յէլ չըտանի՞ խըտ ուրիմ:

Դիկ կը տանոնա, կասա. - Գաճի՛ ախպեր, անծեղ կասա, ընծի էլ չըտանի՞ խըտ ուրիմ հաճ:

Կասա. - Թե օր մեխք չունի:

Դիկ կը տանոնա վըր անծղուն, կասա. - Գաճին կասա, թե մեխք չունի, թ՛ իգա՛ տանիմ:

Անծեղ կասա. - Ես անասու՛մ եմ՝ խըտ իմ հալին, ես ի՞նչ մեխք ունիմ:

Աղվես կասա. - Օր մեխք չունիս, արի՛, էրթանք:

Կերթան քիչ մի դեն, կը տեսին, օր կղոսաք էնդեխեն էկավ:

Ասաց. - Աղվեսն ախպեր, դո՞ր կերթաս:

Անձեղ տանրցավ վերեն, - Տո քո ձեն կըտրի՛,- ասաց,- դու քո՞ն ես, էսի հնչի յա: Դու չըս տեսի՞, էտր շորեր հըմեն կանանչ, թըզբեղ վիզ:

Կղոսաբն ասաց անձղուն. - Դու դո՞ր կերթաք:

Անձեղն ասաց. - Մենք կերթանք հնչ:

Կղոսաբն ասաց. - Հնչի ախպորն ասա՛, ընձի էլ չըտանի՞ ուր խետ:

Անձեղ տանրցավ վըր աղվըսուն, ասաց. - Հնչի՛ ախպեր, ընձի էլ չըտանի՞ խըտ ուրին:

Աղվեսն ասաց. - Թի օր մեխք չունի, կը տանիմ:

Անձեղ տանրցավ վըր կղոսաբն ասաց. - Կղոսաբ՛, դու մեխք չունի՞ս:

Ասաց. - Չէ՛, ես ի՞նչ մեխք ունիմ:

Անձեղն ասաց. - Օր մեխք չունիս, արի՛ էրթանք:

Էն էլ էկավ, ընգավ խետըվներ:

Քիչ մի տեղ քնցին, տեսան, օր բնչոկն էկավ, ասաց. - Աղվեսն, դո՞ր կերթաս:

Կղոսաբ տանրցավ, ասաց. - Քո ձեն կըտրա՛, քոփն՛կ, էսի հնչի յա: Դու չըս տեսի՞ էտր կանանչ թըզբեղն օր վիզն ա:

Բնչոկն ասաց. - Մեղա՛ հԱստըծու, ես ի՞նչ գիտի, օր հնչի էր, - ասաց. - դու դո՞ր կերթաք:

Կղոսաբն ասաց. - Կերթանք հնչ:

Ասաց. - Հնչի ախպորն ասա՛, ընձի էլ չըտանի՞ ուր խետ:

Կղոսաբ տանրցավ վըր աղվըսուն, ասաց. - Հնչ՛ աղա, բնչոկ կասա՞ ընձի էլ չըտանի՞ ուր խետ:

Աղվեսն ասաց. - Օր մեխք չունի, կը տանիմ, հորի՞ չըտանիմ:

Կղոսաբ բնչոկին ասաց. - Դու մեխք չունի՞ս:

Ասաց. - Չէ՛, ես ի՞նչ մեխք ունիմ:

- Օր մեխք չունիս, արի՛ էրթանք:

Էն էլ էկավ ընգավ խետըվներ:

Տեսան օր սարեկն էնդեխեն էկավ, ասաց. - Աղվեսն ախպեր, դո՞ր կերթաս:

Բնչոկ տանրցավ վրեն, - Քու ձեն կըտրա՛, - ասաց, - անա՛մոթ, էսի հնչի յա: Ընգեր մեր հանեճ, մեզի կը տանի հնչ:

Սարեկն ասաց. - Ասա՛, տե՛ս, ընծի էլ չըտանի՞ խըտ ուրի՛ն:
Բա՛շոկն ասաց աղվըսուն. - Դա՛ջի՛ ախպեր, սարեկն էկե, կա-
սա՛ ընծի էլ չըտանի՞ խըտ ուրի՛ն:

Ասաց. - Օր մեխք չունի, կը տանիմ:

Բա՛շոկ տա՛րցավ վըր սարեկուն, ասաց. - Սարե՛կ, դու մեխք
չունի՞ս:

Ասաց. - Չէ՛, ես ի՞նչ մեխք ունիմ:

- Օր մեխք չունիս, արի՛ էրթանք:

Սարեկն էլ ընգավ խետըվներ գնաց: Մի քիչ գա՛ցին, տեսան,
որ կուրկուր ենդեխենն էկավ:

Ասաց. - Աղվե՛ս ախպեր, դո՞ր կէրթաս:

Սարեկ տա՛րցավ վերեն, ասաց. - Տո քու ձեն կըտրա՛, սե՛վ:
Դու չըս տեսի՞, որ էսի հա՛ջի յա, էտոր շորեր՝ զըմեն կանանչ, թըզ-
բեղ վիզ: Շորերուց ճանչըցի՛, որ էսի հա՛ջի յա:

Ասաց. - Մեղա՛ հԱստըծու, ես ի՞նչ գիտի:

Ասաց. - Դու դո՞ր կէրթաք:

Սարեկն ասաց. - Կէրթանք հա՛ջ:

Կուրկուրն ասաց. - Դա՛ջուն ասա՛, տե՛ս, ընծի էլ չըտանի՞
խըտ ուրի՛ն:

Սարեկն ասաց աղվըսուն. - Դա՛ջի՛, կուրկուր կասա՛՝ ընծի էլ
չըտանի՞ խըտ ուրի՛ն:

Կասա. - Օր մեխք չունի, թըխ իգա, էրթանք:

Սարեկն ասաց. - Կուրկու՛ր, դու մեխք չունի՞ս:

Ասաց. - Չէ՛, ի՞նչ մեխք ունիմ:

- Օր մեխք չունիս, արի՛, էրթանք:

Քիչ մ՛ էլ ճամբախ գացին, լակլակ տեսավ, որ քո՛մ մի կըն-
ցին:

Ասաց. - Էրթամ տեսիմ, էտոնք վո՞ն են:

Էկավ տեսավ, որ աղվես ընգեր խավքերու հա՛ռեճ, կէրթան:

Ասաց. - Աղվե՛ս ախպեր, դո՞ր կէրթաս:

Շուտ կուրկուր տա՛րցավ վերեն, ասաց. - Կըտրա՛ քո ձեն,
հերկեն չոքեր, օղորթ մ՛ ա, որ կասեն՝ հերկեն մարթու խելք չո-
քերն ա: Դու չըտեսի՞ս, որ էսի հա՛ջի յա, կանանչ թըզբեղն էլ վիզն
ա:

Լակլակն ասաց. - Մեղա՛ հԱստըծու, կուրկու՛ր, ես չըգիտի:
Դու դո՞ր կէրթաք:

Ասաց. - Չըս տեսի՞ մենք կերթանք հնաջ:

Ասաց. - Հնաջուն ասա՛, տե՛ս՝ ընծի էլ չըտանի՞ խըտ ծեզի:

Կուրկուրն ասաց աղվըսուն. - Հնաջի՛ ախպեր, լակլակ կասա՛ ընծի էլ չըտանի՞ խըտ ուրիմ:

Ասաց. - Օր մեխք չունի, կը տանիմ, հորի՞ չըմ տանի:

Կուրկուրն ասաց լակլըկուն. - Դու մեխք չունի՞ս:

Ասաց. - Չէ՛, ես ի՞նչ մեխք ունիմ:

- Օր մեխք չունիս, արի՛ էրթանք:

Լակլակն էլ ընգավ խետըվներ, գնաց: Քիչ մի տեղ գնացին, տեսան, օր կըռունգն էնդեխեն էկավ:

Ասաց. - Աղվես ախպեր, դո՞ր կերթաս:

Լակլակ շուտ տնրցավ վըրեն, ասաց. - Կըռունգ, քու ծեն կըտրա՛, դու չըս տեսի՞, օր էսի՛ հնաջի յա: էսի մեզի կը տանի հնաջ:

Կըռունգն ասաց լակլըկուն. - Հնաջուն ասա՛, կը խընթրեն, ընծի էլ չըտանի՞ ծեր խետ:

Լակլակն ասաց. - Հնաջի՛ ախպեր, կըռունգն էկեր, կասա՛ ընծի էլ չըտանի՞ ուր խետ:

Աղվեսն ասաց. - Լակլակ, խարցո՛ւ, թե մեխք չունի, կը տանիմ, հորի՞ չըմ տանի:

Լակլակ խարցուց, ասաց. - Կըռունգ, մեխք չունի՞ս:

Ասաց. - Ես ի՞նչ մեխք ունիմ:

- Օր մեխք չունիս, արի՛ էրթանք:

Քիչ մի տեղ էլ գնացին, տեսան, օր պուպու մի ճամբխու վըրեն կայնուկ է: Պուպուն տեսավ, օր քոմ մի խավք էնդեխեն էկան, աղվեսն ընգեր հնաճեվներ, կուգա՛: Պուպուն մըչ ուր մըթքին ասաց. «Կուլա՛, աղվես էսոնց գըլոխ օղյաթ մի պըտի խաղա: Ես էլ պըտի էրթամ խըտ էսոնց, տեսիմք՝ աղվես ի՞նչ օղյաթ կը խաղա էսոնց գըլոխ»:

Գնացին, խասան պուպուի մոտ, պուպուն ասաց. - Աղվես ախպեր, պնրով: Դո՞ր կերթաք:

Կըռունգ շուտ խասավ, ասաց. - Քո ծեն կըտրա՛, հնաջի յա, մեզի տանի հնաջ:

Պուպուն ասաց. - Հնաջի աղից խարցո՛ւ, տե՛ս ընծի էլ չըտանի՞ խըտ ծեզի:

Կըռունգ ասաց աղվըսուն. - Հնաջի՛ ախպեր, պուպուն կասա՛ ընծի էլ չըտանի՞ խըտ ուրիմ:

Աղվեսն ասաց. - Խարցո՛ւ, օր մեխք չունի, կը տանիմ, հորի՞ չըմ տանի:

Ասաց. - Պուպո՛ւ, դու մեխք չունի՞ս:

Ասաց. - Չէ՛, ես ի՞նչ մեխք ունիմ, ամասու՛մ եմ՝ խըտ իմ հա՛լին:

- Օր մեխք չունիս, արի՛, էրթանք:

Եղավ իրիկուն: Գացին տեղ մի նըստան, համա աղվըսուն ախ գելուց շատ կա: Մըչ ուր մըթքին ասաց. «Ես իմա՞լ օղյաթ մի խաղամ գելու գըլոխ, օր գելուց պըռծիմ: Կեցի, գելու օղյաթ կղոլա յա: Ես մըկա գելու գըլոխ կը կուրիսիմ»:

Ասաց. - Գե՛լ ախպեր, էսա ամասուններ մեռան անոթի: Էսոնց ճոչ ես եմ, ընծնե ցածր դու ես: Էլի՛ էրթանք, բա՛լքի օխչար մի պերեմք, էսոնք ուտեն:

Գելն ասաց. - Դրամեցի՛, հաջի՛ ախպեր: Քո խոսքն ա, անոթի կեղի՞:

Աղվեսն էլավ, ընգավ գելու հանեծ, գացին տա՛րի մի վրեն կայնան, տեսան, օր թա՛ ճուղ մի օխչար մըչ ձորուն ա:

Աղվեսն ասաց. - Գե՛լ ախպեր, դու կայնի՛ դատ ի, ես գողտուկ կերթամ, էնոնք ընծի չըտեսիմ, ես մանդր եմ: Տեսինք խովիվ ո՞ր տեղն ա նըստուկ, շըներ ո՞ր տեղն են նըստուկ, օր չէրթաս, ընգիս շըներու մեչ, քեզի պըռնեն:

Աղվես գնաց, տեսավ, օր խովիվ նըստեր, չորս խատ էլ շուն խըտ կըշտին են՝ փըլի մի տակ:

Էկավ, ասաց. - Գե՛լ, դու գիտե՞ս դորվեր էրթաս:

Գելն ասաց. - Դաջի՛, ես ի՞նչ գիտիմ: Դու գացիր, տեսար: Ընծի ճամբախ ցո՛ւյց տուր, ես էրթամ:

Ասաց. - Էնա փուլ կը տեսի՞ս:

Ասաց. - Խա՛, կը տեսիմ:

Ասաց. - Էն փըլի հետեվ թուխ մաքյի նըստուկ ա: Կէրթաս, հուշիկ թուխ մաքյին կը պըռնես, կառիս, կու գաւ: Խովիվ քընուկ ա, շուն էլ չըկա խետ: Սկի մը՛ վախենա:

Գելն էլավ, գնաց, գնաց փըլի հետեվ, տեսավ, օր սեվ մի, իմալ օր աղվես կասա, փըլի էնդեխ նըստուկ ա: Դու մ՛ ասի, թ՛ էղի սեվ շուն ա: Գնաց, հուշիկ պերան թա՛լեց հինե, թա՛լելու պես շուն բոռաց, օր թա բոռաց, մյուս շըներ թափան վըրեն, էնտեղ

պըռնին, ըզգել խեղտեցին: Աղվես դռ չավտա, թե գել խեղտած ան: Անգանջ էրաց, տեսավ, օր խովիվ գանրկեց գելու զըխուն:

- Գիշերո՞վ կու գան օխչար գողնաս: Դողոն էտըմլա՞ քեզի կը խեղտա, հա՞ ա՛:

Էնդեխ աղվես ուրախելեն էկավ, տեսավ, օր խավքեր հըմեն նըստած ան:

Ասին. - Հանջի՛ ախպեր, հո՞ւր ա գել:

Ասաց. - Ասպած գելու տուն ավիրա՛, գել մեղավոր, կասեր, կերթամ հանջ: Գել զուր պատիճ գտանվ: Շըմեր պըռնին, խեղտին: Դե՛, հրամեցե՛ք էրթանք, շուտով կը խասինք մեր տուն հեսօր:

Աղվես խավքերն առավ, էկավ ուր բուն, կայնանվ տըռան հանե՛ծ:

Ասաց. - Հրամեցե՛ք, ախպըրտի՛ք, հրամեցե՛ք վեր:

Խավքերն ասեցին. - Հանջի ախպեր, դու հրամեցի՛ նըստի՛, նոր մենք նըստինք:

Աղվեսն ասաց. - Հեսօր էսի իմ տուն ա, դու ձեզի նըստե՛ք, ռհանթե՛ք, եսի օր գանցինք ճամբան խըլղի մեջ, էն վախտին գձեզի տեսիմ, ընծի պատվե՛ք:

Խավքեր զըմեն գանցին, լըցվան աղվըսու բընան մեջ, աղվես տուռն առավ վըրեներ, նոր սիռտ ռհանթավ, ռհանթ նըստավ ուրին:

Ասաց. - Ախպըրտի՛ք, բեխք ձեզի ռհանթե՛ք, ըսկի կասաֆաթ չենեք: Ես էլ փըշու՛մ բընիմ ու ռհանթիմ, ետո կէլնինք, կը գրուցենք:

Խավքեր ռհանթան ուրանց, աղվեսն էլ ռհանթավ, էրկու ռհանթեն վերձ ասաց. - Ախպըրտի՛ք, էլեք վե՛ր, էլեք վե՛ր: Աղո՞թք էրեք, Աստըվա՛ծ կանչեք, բանլքիմ ձեր մեխքերուն թողութեն էղի: Մենք հանջ կերթանք, մեղավոր մարթուն թողութեն չըկա: Մեղավոր մարթ կը պատըճվի:

Խեղձ անասուններ էլան, միամիտ ստտով աղոթք էրին ու Աստըվա՛ծ կղանչին: Է՛, ի՞նչ գիտին, օր աղվըսի միթք շուն ա:

Աղվեսն ասաց. - Ախպըրտի՛ք, ձեր աղոթքն էրի՞ք:

Ասին. - Խա՛, հանջի՛ ախպեր, մեր աղոթքն էրեցինք:

Աղվեսն ասաց. - Ախպըրտի՛ք, նըստեք ձեզի պատմութե՛ն՝ էնեն:

Ասին. - Այո՛, հանջի՛ ախպեր, էրա՛:

Ասաց. - Մենք հեռու ճամբանք կերթանք: Իրարու մուղանք կենաք, հետօր մենք կերթանք Աստղծու ճամբսու խետ, ես մըտա ձեր մեղաց տակ, ձեզի առա, էկա, կը խընթերեմ ձեզնե, օր գանք մեկիկ-մեկիկ ձեր մեխքեր ընծի պատմե՛ք, օր ես վանը սեվերես չէղիմ:

Բոլորն էլ մեկ անգամ ասեցին. - Հանջի՛ ախպեր, մենք ի՞նչ մեխք ունինք: Մենք ամենքս էլ անասուն ենք:

Ասաց. - Ախպըրտի՛ք, դու Աստղծու հանեճ վկա կեղի՞ք, օր վոն օր մեխք ունեցավ, զէն ես սպանեմ ու բոլորն էլ չէրթան, մեղավորնան:

Ասին. - Հա՛, հանջի՛ ախպեր, մենք վկա ենք:

Ենտեղ խորամանգ պուպուն ասաց. «Վուլան՛, աղվես էտնց գըլոխ օղյաթ մի պիտի խաղա: Տեսինք ես իմա՞լ պըտի ազանավիմ էտր ծեռնեն»:

Ասաց. - Լապըստրա՛կ, քարի՛ վանտակ, արի՛ տեսինք, դու մեխք չունի՞ս:

Ասաց. - Հանջի՛ ախպեր, ես ի՞նչ մեխք ունիմ:

Ասաց. - Օր դու մեխք ունեցար, քո վիզ քաշի՞մ:

Ասաց. - Խա՛, օր մեխք ունեցա, իմ վիզ քաշա:

Ասաց. - Լապըստրա՛կ, Աստղված ամենի օտ-ծեռ բար ա ըստեղծեր, հորի՞ քու հետին օտքեր հերկեն ա ու քու հանճին օտներ կարճ ա: Ախպըրտի՛ք, էսի մեխք չէ՞ր էտր:

Ասին. - Խա՛ա՛, մեխք ա:

Ասաց. - Էսա քեզի մեկ մեխք: Լապըստրա՛կ, խըլը կերթան տաս-քսան կուռուշ կուտան, թանձա ֆիդա մի կը պերին, տընգեն ուրանց բանդի մեչ: Դու կերթաս, քոքեն կը կըռծես, չուր գըլոխ, կը չորնա: Մարթու փարեն կերթա, կուրիսի: Ախպըրտի՛ք, էսի մեխք չէ՞:

Ասին. - Խա՛ա՛, մեխք ա:

Ասաց. - Լապըստրա՛կ, արի՛ ես քո մեղաց թողութեն էնեմ, օր քո մեխք ընծնե չուզեն:

Պըռնեց, հուշիկ ըզլապըստըրկու վիզ քանչեց, թանլեց դանի: Խավքերու չոքերն էլանվ դիդ:

Ասին. - Վա՛խ, վա՛խ, էսա անաստված մեզի դուբարան էրաց, պըտի զմեր տուն ավիրա էսի:

Ասաց. - Դի՛կ ախպեր, արի՛ տստեղ, քո մեխքեր ընծի խոստովանի՛, օր վնը էրթանք հնչ, քու մեխք ընծնե չուզեն: Ես քո մեղաց թողութեն էնեմ:

Խեղճ դիկ էլ ճար չունի:

Եկավ, հուշիկ նըստավ հանեճ, ասաց. - Դնչի՛ ախպեր, ես ի՞նչ մեխք ունիմ:

Ասաց. - Ախպըրտի՛ք, օր էտոր մեխք գտա՛, դու իրավունք կուտա՞ք, օր էտոր վիզն էլ լապըստրըկու պես քնչեմ:

Խեղճ անասուններ ասին. - Դնչի՛, դու գիտես:

Աղվեսն ասաց. - Լսե՛ք, օր էտոր մեխք տամ էտոր էրես, - ասաց, - դի՛կ, Աստըված ախշըրքի մեչ՝ ամեկ մարթուն մեկ կընիկ իրավունք տվեր ա: Դու մեկ մարթ ես, ի՞նչ իրավունք ունիս, օր քառսուն կընիկ պախես: Եսի մեխք չէ՞ր քեզի: Եսա քեզի մեկ մեխք: Դու կեսգիշերին կելիս, խըլղ չըս թողե տանարին, քընին, կես կելին, կերթան, բըբու մեչ կը խեղտին, կես կերթան կը թալընվին: Եսա քեզի մեխք չէ՞: Եսա քեզի էրկո՞ւ մեխք: Տըղե մի թածա՛ կը կարգվի, դըռ չէթա ուր տեղ պառկի, դու շուտ կելիս, կալաբալըխ կը տընիս: Անաստված, դու գխարս ու փեսե՞ն էլ իրանուց կենես: Եսա քեզի մեխք չէ՞ր: Քո մեխքի հնչպով, էքան մարթն էլ Ձանգան հնչքըրի ջուր չըխմեն: Ախպըրտի՛ք, դուք իրավունք կու տա՞ք, օր ես էտոր վիզն էլ քնչեմ:

Խե՛ղճ անասուններ լալելեն ասին. - Դո՛ւ գիտես:

Աղվես դըկու վիզն էլ քնչեց:

Ասաց. - Անծե՛ղ, արի՛ տեսինք, դու մեխք չունի՞ս, կերթանք հնչ, քո մեխք ընծնե կուզեն:

Ասաց. - Դնչի՛, ես ի՞նչ մեխք ունիմ:

Ասաց. - Ախպըրտի՛ք, օր էտոր էլ մեխք գտիմ, էտոր վիզ քնչե՞մ:

Ասին. - Դնչի՛, դո՛ւ գիտես:

Աղվեսն ասաց. - Անծե՛ղ, իմ խըսաբեն ախշարք մալ կը մորթա, նոր կուտա: Խեղճ ռենջբար մի կերթա քաղքեն, էշ մի բուտ կը պերա, օր ուրին շոր մի առի, խագի: Դու կերթաս, կը գանիս էն իշու միջնաց վերեն, էն իշու մեչք կենես բրին, սաղ-սաղ կուտես, էսի մեխք չէ՞: Խեղճ ռենջբար էշ կը խատի, իշու տեր կու գան ռընջբըրի եզ կը տանի էն իշու տեղ: Եսա քեզի մեխք չէ՞: Ես քեզի

իմա՞լ տանիմ հանջութեն: Ես իմ մեխք շախա՞, օր քո մեխք շախիմ: Ախպըրտի՞ք, էսի մե՞խք ա էտր:

Խեղճ անասուններ ասին. - Ապա մեխք ա, մե՞խք չի:

Աղվես պըռնեց, էնոր վիզն էլ քաշեց:

Կանչեց, ասաց. - Կղոսա՛ր, արի՛ տեսինք դու մեխք չունի՞ս:

Կղոսաբն ասաց. - Ես ի՞նչ մեխք ունիմ:

Ասաց. - Օր քեզի մեխք գտա՞, քո վիզն էլ անծղու պես կըտրի՞մ:

Կղոսաբն ասաց՝ խա՛:

Ասաց. - Կղոսա՛ր, էս ախշըրքի մեչ վի՞ր բոկի տակն ա ծակ, օր քո բոկի տակ ծակ ա³⁰: Էսի քեզի մեխք չէ՞: Էսա քեզի մեկ մեխք: Դու գիշեր-ցերեկ կէլիս, ծառերու վերեն կը կայմիս, կէնես կղա ու կղու, կղա ու կղու, խըլղ ի՞նչ գիտեն, թե խե՞ր ա, շա՞ռ ա, զըմեն կասեն, թե խե՞ր ա, վըր մեզի, թե շառ ա, վըր քեզի: Միշտական դու խե՞ր ու շառ կը զրուցես: Էսի քեզի մեխք չէ՞ր: Պառապ չորթան կը շինա, կը տնա՞ տանիս, օր ծմեռ էնա ուր էրեխեստերուն կուք: Դու կերթաս կը զանիս էտ չորթան, կը տանիս: Էտի քեզի մեխք չէ՞: Ախպըրտի՞ք, էսի մե՞խք ա:

Խեղճ անասուններ ասին՝ մեխք ա:

Կղոսաբու վիզն էլ քաշեց:

Ասաց. - Բաշո՛կ, դու մեխք չունի՞ս:

Ասաց. - Զէ՛, ես ի՞նչ մեխք ունիմ:

Ասաց. - Օր դու մեխք ունեցար, քո վիզն էլ կըտրի՞մ էտր պես:

- Դա՛ա՛, թե մեխք ունեցա, իմ վիզն էլ կըտրա՛:

- Ախշըրքի մեչ ինչքան օր թռչունք մի կա, դու գիշեր-ցերեկ կընգիս էտոնց հետեվ կը լա՛րիս, կը զանիս հընթիտակ կը ծակես, կը պըռնես, կուտես: Էսի քեզի մեխք չէ՞ր: Էսկից մեծ մեխք էլ ես վի՞ր վերեն գըտիմ: Ես քո վիզն էլ պըտի կըտրիմ:

Ու պըռնեց, էնոր վիզն էլ կըտրեց:

Ասաց. - Կուրկո՛ւր, դու մեխք չունի՞ս:

Կուրկուրն ասաց. - Ես ի՞նչ մեխք ունիմ:

Ասաց. - Կուրկո՛ւր, օր քեզի մեխք գտա՞, քո վիզ քաշե՞մ:

Ասաց. - Խա՛ա՛, իմ վիզ քաշա՞:

³⁰ Իրր թե ազոավի պարամոցը ծակ է (Ծ.Բ.):

Կուրկուր, - ասաց,- կընիկ մի գուր ճըժերու կըսմա՞ք կը կըտ-
րա, ուր ճըժեր կը թողա պախս, կը պերա տաս-քսան խավկիթ կը
տնա խավու տակ, օր խավ ծա՞ք խանա, ճոչցու ու էնոր ճըժերու
կըսմա՞ք շատնա: Խեղճ խավ, քսանումեկ օր կը նըստի էն խավ-
կիթներու վերեն, հօր մեկ դա՞ն կուտ կուտա: Կուգա՞, օր ուր
ծա՞քեր խանա դու, արեվու հա՞ռեճ տաքցու, դու չըս թողեր էնի
արեվու էրես տեսի: Միշտական կը գա՞նիս, էնոր ծա՞քեր կը
տանիս: Եսի քեզի մեխք չի՞: Թռչունք մի, տեղ մի պա՞ն կը տնա,
էնոր ծա՞քեր քիչ օր կը ճոչնան, չիշխընան էնոնց գըլոխ ծակեն
խանեն դու: Դու ժիր կը պըռնես գըլխըներուց ու կառիս,
կերթաս: Ու իրիկուն մեր կու գա՞, կը տեսի, օր ծա՞ք չըկա: Ինչ
կըղղա՞ր էն մոր քիգրին մըրմուռ ա: Ետորից ճոչ մեխք էլ ես վի՞ր
վերեն գտիմ: Ես քո մեխքի պատասխան էլ իմա՞լ տամ:
Ախպըրտի՞ք, դուք կաթուլ կենե՞ք, ես էտոր վիզն էլ կըտրե՞մ:

Խե՞ղճ մնացած անասուններ ասին. - Մեր ծեռ էլ ի՞նչ կա:
Դու քո խելքով ի՞նչ ուզես, գէն կենես:

Ձենոր վիզն էլ քաշեց:

Ասաց. - Ճընջո՞ւղ, արի՛ տեսի՞նք, դու մեխք չու՞նի՞ս:

Ճընջուղն ասաց. - Ես ի՞նչ մեխք ունիմ:

- Հա՛ա՛, ճընջո՞ւղ, դու մեխք չու՞նի՞ս: Քո մեխք վըր ամենին
շատ ա: Մարթ մի կերթա, էրկու կուտ գա՞րի կը գնա, պերա, օր ուր
ճըժերուն կուք ցանա: Էն գա՞րին դըռ չըխասի, քիչ մի խատ կընգի
հինե, դու սա՞վ կը պըռնեք, գիշեր-ցերեկ կը մըտիք էն արտի մեչ:
Ձէն արտ կը թեփնեք ու էնոր էրեխեսներու կըսմա՞ք կը կըտրեք:
Եսկից հեվելի մե՞խք: Մարթ մի բալքի մարթ չու՞նի, մեկ խատ քոռ
էրեխա ունի, ուր խատ կը խանա, փըռա տանիս, օր չորնա, էրե-
խին կասա՛ էլի՛, նըստի՛ խատի մուտ: Էրեխեն ա ու չըտեսի: Դու
Աստըված չու՞նի՞ք, կերթաք էտ խատըն հըմեն կուտեք: Ետոր էրե-
խեսներու կըսմա՞ք կը կըտրեք: Ես էղավ քեզի էրկո՞ւ մեխք: Մարթ
մի բալքի կըթան չու՞նի, կերթա քասե մի կանփետ կը գտի, կը պե-
րա, կասա՛ բալքի ծմեռ եղի իմ ճըժերուն կըսմա՞ք: Դըռ խատ չի՞ն-
գի հինե, դու կերթաք, զըմեն կուտեք: Տեր կերթա, կը տեսի, օր
խատ չըկա հինե: Կասա՛ ճընջըղնե՛ր, Աստըված ձեր տուն ավի-
րա՛, իմա՞լ դուք էսա կանփետ հըմեն թեփնեցիք, դու Աստըծուց չը-
վախեցա՞ք, իմ ճըժերու կըսմա՞ք կըտրեցիք: Եսա քեզի մեխք չէ՞, ես
քեզի իմա՞լ տանիմ խըտ ընծի Սուրբ Քաթայի մուտ, էնոր պուր

դու յոթ խետ պըտոտես, էրթաս, էնոր քար պաքես ու էնտեղեն էլ քար վերցուս, պերես, միշտական դնես քու հանեճ, աղոթք էնես վերեն: Եսի Աստըված կընթունա՞: Վա՛խ, վա՛խ, ես էլ մեխքի մեջ կուրիսա: Կայնի՛, ես շուտով քու վիզ կըտրեմ, քանի ուրիշներ քու մեխք չըլըսած ան:

Պըռնեց ու ճընջըղու վիզ կըտրեց:

Կղանչեց սարեկուն, ասաց. - Սարե՛կ, դու մեխք չունի՞ս:

Սարեկն ասաց. - Չէ՛, ես ի՞նչ մեխք ունիմ:

Աղվեսն ասաց. - Սարե՛կ, լա՛վ իմանաս, օր քեզի մեխք գտա՛, քո վիզն էլ քաշե՞մ:

Խեղճ սարեկն ասաց. - Դո՛ւ գիտես:

Ասաց. - Սարե՛կ, քո վնթապետ վո՞ն ա, ընծի ցո՛ւյց տուր՝ տեսի՞նք, օր օրական խարիր լեզու կը կարտաս, ուրիշներ էտքան ծախս կենեն, դըռ չըն կանա էնոնց էրեխին մեկ լեզու սովըրցուն, քու էրեխեն հընց էլնելու պես դուս խարիր տեսակ լեզու կը կարդա: Ես ի՞նչ անաստվածութեն ա կենես: Ա՛յ էսա քեզի մեկ մեխք: Ախպըրտի՛ք, դու շիտակ լսե՛ք, դեմակ դու խապիպա մարթ ես: Գանու՛ն կու գան, սեվ ես, ամիս մի կէրթաս ու կու գան, նըխշուն ես, աշուն քո ձաքեր կը խանես, հըմեն ջո՛ն են, կը տամիս ամիս մի կը պըտոտցուս, հըմեն կը նըխշես, պերես, դու ի՞նչ մարթ ես, մեկ մարթ մեկ օրենքի կը ծառայա, դու ամիս օրենքի մի կը ծառայես: Ես էղավ քեզի էրկու մեխք: Աստըված ամեն անասուն էլ ստեղծեր ա, դու քո ձաքերն օր խանեցիր, կընգիս արտեր, որթ էղի, կը պերես, բուլոճ էղի, կը պերես, կիտուր էղի, կը պերես, դու չըս ասի՞, էտնք հըմեն էրեխի տեր են, ես իմա՞լ կը մըտիմ էտոնց մեխքի տակ: Դու օրական խաճաճ խատ արունք կենես: Միթե դու Աստըծուց չըս վախենա՞ր: Աստըծուց պըռծի, Աստըծու ստեղծած մեկ մըժիկ չըկանա ստեղծա, դու օրական խաճաճ խատ արընքի տակ կը մըտիս: Անաստված, հապա դու ընծի կասես, արի՛, ընծի տա՛ր Սուրբ Քաբայի պուրր, յոթ փաթ պըտոտցո՛ւ, օր ես էղիմ հաճի ու գան: Քեզի պես արընպարտանք մարթիք Սուրբ Քաբային արժանի՞ են:

Աղվեսն համա հեռոտ էլավ, պըռնեց սարեկու վիզ ու քաշեց, թալեց:

Խեղճ կըռունգն ու լակլակ ուրանց տեղ դողացին: Ասին. «Վա՛խ, վա՛խ, դորն էկավ մեզի»:

խորամանկ պուպուն ըսկի կասաֆաթ չենա:

Կանչեց լակլըկուն, ասաց. - Լակլա՛կ, դու մեխք չունի՞ս:

Լակլակ համա խեղճ, լճլեւեն, դողաւեն, ասաց. - Դձջի՛ ախպեր, ես ի՞նչ մեխք ունիմ:

Աղվեսն համա հեռստտ ասաց. - Կեցի՛, տե՛ս, ինչ կը խաղամ քո գըլոխ, դու մեխք չունիս, արե՛ դես, արե՛ դես:

Խեղճ լակլակն էկավ, նըստավ հձռեճ:

Ասաց. - Լակլա՛կ, էսա խավքյեր հըմեն կը տեսի՞ս, աչքա էտնց կտըցներ ու քո կտուց ինչքա՞ն հերկեն ա վըր էտնց կտըցներուն: Էսա քեզի մեկ մեխք: Աչքա՛ քո օտներ ու էտնց օտներ, քո օտներ ինչքա՞ն հերկեն ա վըր էտնց օտներուն, էսի մեխք չէ՞ր քեզի: Աստըված ախշարք ամեն մեկ ռանգի յա ստեղծեր ա, էս հորի՞ դու իրեք ռանգի ես: Քու օտներ՝ կարմիր, քո կտուց՝ կարմիր, քո պոչն ու քու թեվերու ծեր՝ սեվ, քո ջճնդճկ՝ սիվտակ: Էսի քեզի մեխք չէ՞ր: Դու մուկ չըս թողե, գոռտնուկ չըս թողե, օց չըս թողեր, էտնք զըմեն դու կը բերես, կերցուս քո ծճքերուն, էտնք էրեխի տեր չե՞ն: Էտնց էրեխեք հըմեն կը մնան էթիմ: Կճղ էսա մեխքըն հըմեն Ասպած ընծեն կուգա, ես կեղիմ քեզի սաքաք, քեզի կը տանիմ Սուրբ Քաբեն, կենեմ հձջի: Կայնի՞ ես քու վիզն էլ կըտրեմ:

Լակլըկու վիզն էլ կըտրեց:

Մացին կըռունգն ու պուպուն:

Ասաց. - Կըռունգ, արե՛ տեսիմք, դու մեխք չունի՞ս:

Կըռընգու պերան էլ հախու չըպաճցվավ:

Ասաց. - Դձջի՛ աղա, ունիմ, չունիմ, դու՛ գիտես, էլ դու ընծեն հորի՞ կը խարցուս:

Աղվեսն ասաց կըռընգուն. - Ես կուզիմ, օր դու մեխք չունենաս, ես ու դուն ու պուպուն էրթանք Սուրբ Քաբեն, հուխտ էնենք ու տճնանք գանք:

Խեղճ կըռունգն ասաց. - Դձջի՛ աղա, օր էտըմլճ պա՛ մի էնես, շատ շնորհակալ կեղիմ քեզնե:

Ասաց. - Կըռունգ, իրիկուն օր գա, ամեն ուր տեղ կը պառկի, էս քընել Աստըծուց ա, դու հորի՞ կը կայնիս վըր քու մեկ օտաց, ինչ կըղդար քո քուն գա, դու կը նընջաս, ինգիս գետիմ: Էսա քե մե՞կ մեխք: Մարթ մի բալքի տեղե մի կելի, գողտուկ տեղ մի կերթա, դու շուտ կըռկըռուն կը տնես, դու խըլղի նորադճ՞րն ես: Դու

չըս թողե մարթ մ' էրթա ուր խըզմըթին: Էսա քեզի էրկո՛ւ մեխք: Գա՛րու՛ն օր գա՛, կը պանցըրնաս, պանցըրնաս ու կը կըռկըռաս: Խըլը կը շիթկին ու կաջքեն ել դըվեր, կասեն՝ կըռնճոպան, կըռնճոպան, կըռնճոպան: Բա՛զի ճիժ կա օր խեւք կերթա, կընգի գետին հետեվանց, գըլոխ կը կոտրի, էտի քեզի մեխք չէ՞ր: Կայնի՛ ես քո վիզն էլ կըտրեմ էսոնց պես:

Էլ՛նվ ծեռ թա՛լեց ու զկըռընգու վիզն էլ կըտրեց:

Մնացին հինքն ու պուպու՛ն:

- Է՛, - ասաց, - պուպո՛ւ, հորի՞ ես քա՛շվե էտա մեկ դեխ կայներ ես, դու էսա ջանդըկներ չըտեսի՞ս: Քեզ էլ պըտի խառնեմ էս ջանդըկներ, գիտե՞ս: Իճի՛, արի՛ իմ հա՛ռեճ, քո մեխք քըց էս ամենին շատ ա: Էսոնց վիզ հըմենին օր կըտրեցի, էսոնց մեխքն էլ ընգա՛վ քո վիզ: Կայնի՛, տես ի՞նչ կը խաղամ քո գըլոխ: Իճի՛, արի՛ իմ հա՛ռեճ:

Պուպու՛ն ասաց. - Դե մեռի՛, դու՛ն ու քու անուն, աղվե՛ս, ես քո պերնի բրդուճ չեմ, ես ըսկի մեխք չունիմ: Իմ մեխքեր տո՛ւ իմ էրես, տեսի՛նք:

Ասաց. - Քեզի մեխք չըկա՞:

Պուպու՛ն ասաց. - Չէ՛:

Աղվեսն ասաց. - Դու ի՞նչ իրավունք ունիս, օր թաքավորի թագ կը տընիս քո գըլոխ:

Պուպու՛ն աղվըսուն ասաց. - Աստըծուց ա մեր ջընսին հրա՛ման էղեր թագ: Մեր ջընս քանի կա, պըտի թագ գըլոխսն էղի: Էտի մեխք չէ՛, թե ուրիշ մեխք կա, գըտի՛:

Ասաց. - Պուպո՛ւ, դու ի՞նչ մարթ էղիս, օր էրթաս միշտական կայնիս քարերու գըլոխ, ծառերու գըլոխ, ծամխըներու վըրեն, հընց գիշեր ու ցերեկ ասես՝ պուպո՛ւ, պուպո՛ւ ու գիշեր-ցերեկ խըլըին քա՛ք կերցուս: Էղի դու ո՞րն էղար:

Խորամանգ պուպու՛ն ասաց. - Է՛, աղվե՛ս, աչտի աղեկ պա՛ց, ես պուպու՛ն եմ, քեզ էլ պըտի կերցում:

Համա աղվես ուր տեղեն հեռոտ էլնվ, ասաց. - Պուպո՛ւ, դու քըց էսոնք հըմեն հեվե՞լ ես:

Ասաց. - Ես հեվել եմ: Ես շըհա՛ղ ունիմ, օր էսա թագն Աստըծուց էկեր ընձի, կայնի՛ ես էրթամ, առիմ իմ շըհա՛ղներ, գա՛մ, օր տես՛ս՝ ես ի՞նչ պիտի խաղամ քո գըլոխ, աղվե՛ս:

Աղվեսն օր ծըքավ դըխ պուպուն, օր ծեռ պըտի քալեր պուպուն, պուպու դու գողի մ'էղի, աղվըսու զըլխու վըրավով թըռավ դուրս:

Աղվեսն ասաց. «Մեկ պուպուն ընծի պետք չէ: Ես տարի մի էսա ջանդըկներ ուտեմ, ընծի խերիք ա»:

Աղվես տանրցավ, ընգավ վըր խավքերու ջանդըկին: Աղվեսն թըխ ուտելուն էղի, մենք տաննանք վըր պուպուին: Պուպուն գնաց, տեսավ, օր նեծիրվա մի իրեք խատ տաժի խետ էնդեխեն կուգա: Պուպուն իճավ տաժեցներու հանեծ: Հա՛յ էստեղ թըռավ, հա՛յ էնտեղ թըռավ, գտաժիք խապեց, չուր պերեց աղվըսու ծակի վըրեն:

Բռռաց, ասաց. - Աղվե՛ս, աղվե՛ս, հէլի, ես իմ շըհաններ պերեցի:

Աղվես խավքերու ջանդակ կերեր, փորն ուտեր, էլ հիրուր չըկանա առի: Աղվես դուս էլնելու պես տաժիքն առան հետեվ: Չէ՞ օր աղվես կուշտ ա, չըկանա փախի, զուր օտներ զըմեն գարկեց քարեր, արունեց, քընաց մեկ խըռընդատ մի տեսավ, կայնավ խըռընդատի էրեսնըվեր, տաժիք ընցան, գացին, գաղվես չըտեսան:

Պուպուն ասաց. - Աղվե՛ս, տեսա՞ր ըզքոն:

Աղվես մըչ ուր մըտին ասաց. - Պուպու՛, դու գաղվըսուն խեր ու մեր քունեցիր, ընծի ու քեզի կղուլա կէղի: Ինչ տեսակ էղի, ես քեզի պըտի պըռնեմ:

Աղվես փոշման-փոշման տանրցավ, էկավ, մըտավ ուր ծակ: Մընաց մեկ քանի օր ետ, ասաց. «Պուպու քըսմին վըր ճամբխըներուն շատ կը պըտոտա, ես պըտի էրթամ յոթ ճամբխաքանժին պառկիմ, էնտեղ կղաստու խատիմ, քանքի պուպուն գա, ես պըռնեմ»:

Աղվեսն էլավ գնաց, գնաց յոթ ճամբխաքանժին, պառկավ վըր ճամբխուն, կղաստու զինք տրեց խատնել:

Պուպուն էնդեխեն էկավ, տեսավ, օր՝ օ՛հ, իմ աղվես պառկեր էստեղ: Պուպուն մըչ ուր մըտին ասաց. «Կէղի, օր էսի կղաստու յա էկեր, դասի խատեր ա, ես էրթամ քանի՛մ կտուց էտոր պոչին գանիմ, տեսի՞ք»:

Էկավ հուշիկ, իճավ գետին, իրեք-չորս կտուց գարկեց աղվըսու պոչին, աղվես ծե՛ն չէրաց: Թըռավ, էկավ վըր աղվըսու մի-

Ճանց, քանի՛մ կտուց էլ վըր միճանց զանրկեց, էլ մի աղվես ծեն չէրաց:

Գնանց, հուշիկ անգանջ տրեց աղվըսու պերնին, ասաց. - Տեսինք՝ ծեն կէլնի՞ մոտեն:

Տեսավ, օր՝ չէ՛, աղվըսուց բեհն չէլնի:

Ասաց. - Վալա՛, օղորթման խատեր ա: Կայնի՛, էլիմ, կայնիմ էսոր մըռթի վերեն, էսոր աչքեր խանեմ, ուտեմ:

Օր օտ տրեց մըռթի վերեն, էրաց, օր կտուց զաներ աղվըսու աչք, աղվես ուշիկ պերան պանցեց ու զպուպուի օտ պըռնեց:

Է՛, - ասաց, - պուպո՛ւ, զքու խերիկ-մերիկ..., է՛, դու դո՞ր քու խոգին իմ ծեռնեն կազատիս: Ես ջորով զքեզի պըռնեցի, է՛:

Պուպուն ասաց. - Աղվե՛ս, խընթիրք մ՛ ունիմ քեզնե, խոսք մի կա քեզնե ասելու, քեզի ասեմ, ինչ գիտես՝ զէ՛ն էրա:

Աղվես համա հեռսոտ սըռտով ասաց. - Դե ժի՛ր էրա, զքու կող-կուշտ ճարտեցի:

Պուպուն ասաց. - Աղվե՛ս, Բանդանդն ա՞ մոտ, թե չէ՞ Բանս-րաֆ:

Աղվեսն ասաց՝ Բանդանդ:

Օր ասաց Բանդանդ, պուպուն թըռավ, մեկդեխ կայնավ:

Ասաց. - Աղվե՛ս, ես քո խերիկ-մերիկ ..., թ՛ասիր՝ Բանսրաֆֆֆ, օր իմ օտ-զըլոխ քո պերնի մեչ ճարտիր: Ասիր Բանդանդ, ես թըռա, կայնա դանս:

